

ՀԱՅԿ ՄԱՍԱԶԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրավունքի դատական մեկնաբանման առանձնահատկություններն ուսումնասիրելիս՝ առաջնային տեղ են զբաղում իրավաբանական գրականության մեջ որպես իրավունքի մեկնաբանման հնարքներ¹, կամ միջոցներ², կամ մեթոդներ³ անվանվող իրավունքի մեկնաբանման տարբեր մոտեցումների կամ տեսակների ուսումնասիրությունը: Իրավունքի մեկնաբանման տարբեր մոտեցումների ուսումնասիրություններն սկսել են դեռևս Հին Հռոմում և այդ մոտեցումների կատարելագործման գործընթացը շարունակվում է մինչ այսօր⁴: Այս մոտեցումները կիրառելիս օգտագործվում են որոշ դատական փաստարկներ, որոնց միջոցով և տեղի է ունենում իրավունքի դատական մեկնաբանումը: Դրանք օգտագործվում են դատական կոնկրետ որոշումը կամ իրավունքի կոնկրետ մեկնաբանումը հիմնավորելու, իրավունքի մեկնաբանման խնդիրներն առաջ քաշելու, ինչպես նաև հակադարձ փաստարկներին պատասխանելու և դրանք թուլացնելու նպատակով⁵:

Գոյություն ունի իրավունքի դատական մեկնաբանման հիմնական մոտեցումների և փաստարկների մի զանգված, որն օգտագործվում է գրեթե բոլոր պետությունների դատական ատյանների կողմից՝ իրենց որոշումների հիմնավորման ընթացքում: Դատարանների կողմից իրավունքի մեկնաբանման ընթացքում կիրառվող դատական փաստարկների ցանկը որոշելն անհնար է, քանի որ տարբեր համակարգերում դատարանների կողմից տարբեր որոշումներում օգտագործվում են զանազան փաստարկներ: Այստեղ մենք կքննարկենք այդպիսի դատական փաստարկների հիմնական տեսակներից երկուսը, որոնք կներկայացնենք իրավունքի դատական մեկնաբանման լեզվաբանական մոտեցման շրջանակներում:

Քննարկվող փաստարկներից առաջինն իրավական ակտերում օգտագործվող սովորական բառերի տառացի իմաստից բխող փաստարկներն են: Դատարաններն իրենց որոշումները հիմնավորելիս հիմնականում ելնում են իրավական ակտերում օգտագործվող բառերի սովորական, տառացի իմաստից: Իրավական ակտերը ներառում են հիմնականում սովորական բառեր, որոնք ունեն ոչ մասնագիտական, առօրյա նշանակություն: Օգտագործված բառերի և արտահայտությունների իմաստը վերհանելու համար երբեմն անհրաժեշտ է լինում դիմել բառարանների և այլ լեզվաբանական ուսումնասիրությունների օգնությանը: Այն դեպքում, երբ օգտագործվող նման բառերն ունեն մեկից ավել նշանակություն և տեսակաճանաչող կարող են մեկնաբանվել մեկից ավել նշանակությամբ, դատարանները խնդիրը լուծում են բառի իմաստը գնահատելով

ամբողջ տեքստի իմաստի լույսի ներքո և որոշում են թե բառի որ նշանակությունն է լեզվաբանորեն առավել հարմար քննվող համատեքստում: Նման իրավիճակներում կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ բառերը ժամանակի ընթացքում կարող են փոխել իրենց իմաստը, ձեռք բերել նոր իմաստ, որը կարող է հանգեցնել որոշ տարակարծությունների: Նման փաստարկների հիմնական կշիռն այն է, որ իրավական ակտերի տեքստերը հիմնականում գրված են դյուրըմբռնելի լեզվով և պետք է մեկնաբանվեն այնպես, ինչպես օգտագործված լեզվին տիրապետող շարքային անհատը տառացիորեն կմեկնաբաներ այն, եթե իհարկե, չկան նման մեկնաբանությունը բացառող ծանրակշիռ փաստարկներ:

Տառացի մեկնաբանման կանոնն իր ուղղակի ամրագրումն է գտել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանում է, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Նույն հոդվածը շարունակում է այն միտքը, որ իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոխվի վերջինիս իմաստը: Այստեղ խոսքը իրավական ակտի տառացի իմաստի մասին է, քանի որ իրավական ակտերի մեկնաբանումն ինքնին իրավական ակտերի իմաստի բացահայտմանն ուղղված գործունեություն է: Հետևաբար, նշված կանոնն էլ ավելի է ամրապնդում իրավական ակտերի տառացի մեկնաբանման կանոնի դիրքերը և մեծացնում դրա վրա հիմնվող փաստարկների կշիռը: ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս հղում է կատարել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի վրա և հիմք ընդունել այն որոշում կայացնելիս⁶, սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանը բավարարվել է միայն այդ հոդվածին հղում կատարելով և դեռևս չի տվել նշված նորմի համապարփակ մեկնաբանություն: Այնուամենայնիվ, ՀՀ վճռաբեկ դատարանը գործերից մեկում, մեկնաբանելով «Իրավական կատերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածը, սահմանել է, որ իրավական նորմերը «պետք է մեկնաբանվեն օրենսգրքի (օրենքի կամ այլ իրավական ակտի) իմաստով՝ չփոփոխելով դրանց էությունը, չնեղացնելով կամ չընդլայնելով դրանք ..»⁷:

Հաջորդ դատական փաստարկը՝ իրավական ակտերում օգտագործվող սովորական կամ մասնագիտական բառերի և արտահայտությունների մասնագիտական նշանակությունից բխող փաստարկն է: Իրավական ակտերում օգտագործվում են նաև բառեր և արտահայտություններ, որոնք բացի իրենց տառացի, առօրյա նշանակությունից,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ունեն նաև կոնկրետ մասնագիտական-իրավական կամ այլ մասնագիտական նշանակություն: Դատական փաստարկման այն տարբերակը, որը շեշտը դնում է իրավաբանական եզրույթների իմաստի բացահայտման վրա, իրավաբանական գրականության մեջ հայտնի է նաև հատուկ իրավաբանական փաստարկ անվանմամբ⁸: Նման բառերի օգտագործման դեպքերում պետք է որոշել, թե որ նշանակությամբ է բառն օգտագործվել: Որոշ սովորական բառեր, ինչպիսիք են՝ «վկա», «մեղք» կամ «դիտավորություն» բառերը, իրավական ակտերում օգտագործվում են հատուկ իմաստով, որոնց սահմանումը շատ հաճախ տրվում է իրավաստեղծի կողմից: Այստեղ նույնպես երբեմն բառի կամ արտահայտության նշանակությունը կարող է որոշվել ընդհանուր համատեքստի լույսի ներքո: Սակայն պետք է զգույշ լինել, քանի որ երբեմն իրավունքի մեկ ճյուղում որևէ եզրույթին տրված իմաստը կարող է տարբերվել իրավունքի մեկ այլ ճյուղում միևնույն եզրույթին տրված իմաստից⁹: Բառի կամ արտահայտության նշանակությունը որոշելու համար կարող են կիրառվել նաև պատմական ուսումնասիրություններ՝ կապված այլ իրավական ակտերում քննվող բառի կամ արտահայտության ավանդական օգտագործման հետ, ինչպես նաև կարող են օգտագործվել նաև այլ ապացույցներ¹⁰: Փաստարկման այս տեսակի իմաստն այն է, որ եթե իրավական ակտում խոսվում է որևէ մասնագիտական գործունեության մասին, ապա օգտագործված մասնագիտական բառին պետք է տրվի համապատասխան մասնագիտական նշանակություն, անկախ նրանից դրանք կլինեն իրավաբանական եզրույթներ և արտահայտություններ, թե՛ այլ մասնագիտական բառեր:

Վերը նշված երկու փաստարկները ներկայացնում են իրավունքի մեկնաբանման լեզվաբանական¹¹ կամ քերականական¹² մոտեցումը: Չնայած նրան, որ իրավունքի դատական մեկնաբանման նման մոտեցումը քսաներորդ դարում մի փոքր զիջել էր դիրքերը, այնուամենայնիվ, այն այժմ էլ շարունակում է գտնվել առաջնային դիրքում: Ցանկացած իրավական ակտ իրավաստեղծի մտադրության բառային արտահայտությունն է¹³: Նման մոտեցման դեպքում բացի նրանից, որ շեշտը դրվում է մեկնաբանվող իրավական ակտում օգտագործված բառերի և արտահայտությունների տառացի և մասնագիտական իմաստի բացահայտման վրա (բառագիտություն), միաժամանակ այն ընդգրկում է նաև մեկնաբանվող տեքստի քերականական վերլուծությունը՝ ուսումնասիրելով մեկնաբանվող նախադասությունների կառուցվածքը, օգտագործված կետադրությունը, խոսքի մասերը և տեքստի այլ քերականական առանձնահատկություններ (հոլով, թիվ, սեռ, դեմք և այլն)¹⁴:

Այսպիսով, իրավունքի լեզվաբանական մեկնաբանման դեպքում մեկնաբանվող տեքստի սովորական, տառացի կամ մասնագիտական իմաստը չի փոխվում կամ զարգացվում¹⁵: Իրավաստեղծ մարմիններն իրավական ակտերում օգտագործվող բառերի մի քանի իմաստներից ընտրում են մեկը և տալիս դրան համապատասխան նշանակություն¹⁶: Հետևաբար, օրինաչափ է այն, որ ինչպես այլ տեքստերի մեկնաբանության դեպքում, իրավական ակտերի մեկնաբանման դեպքում էլ կիրառվեն միևնույն լեզվաբանական կանոնները¹⁷:

Այն դեպքում, երբ վերը նշված լեզվաբանական փաստարկների միջոցով հնարավոր է լինում պարզել մեկնաբանվող տեքստի իմաստը կամ, ընդհակառակը, երբ դրանք արդյունք չեն տալիս, կարող են օգնության հասնել այլ տիպի փաստարկներ, որոնք առաջին դեպքում ամրապնդում են իրականացրած մեկնաբանման արժանահավատությունը, իսկ երկրորդ դեպքում՝ ինքնուրույն մեկնաբանում տեքստի իմաստը: Իրավական ակտերում օգտագործված բառերի և արտահայտությունների տառացի իմաստից բխող փաստարկների գործածման համար անհրաժեշտ է, որպեսզի ակտի տեքստը լինի պարզ և հասկանալի: Հնարավոր է մի շարք գործոնների առկայություն, ինչը կթուլացնի նման փաստարկների կշիռը, կամ ընդհանրապես, նման փաստարկների օգտագործումն անհնարին կդարձնի: Նման գործոններից կարող է լինել իրավական ակտում բառերի օգտագործման ձևը, որը կարող է կասկած հարուցել դրանց իմաստի վերաբերյալ: Երբեմն իրավական և այլ մասնագիտական եզրույթները նույնպես կարող են անհասկանալի կերպով օգտագործվել: Որոշ դեպքերում հակասություն կարող է առաջանալ մեկնաբանվող տեքստի լեզվաբանական կամ տառացի իմաստի և ողջամիտ իմաստի (common sense, здравый смысл) միջև: Այստեղ մեկնաբանում իրականացնող դատարանը պետք է հղում կատարի տեքստի ողջամիտ իմաստին, եթե տեքստի տառացի մեկնաբանման դեպքում այն կդառնա անհեթեթ և ոչ գործածելի¹⁸: Իրավունքի մեկնաբանման նման տարբերակն անգլոսաքսոնական իրավական համակարգում տարածված է «Ոսկե կանոն» անվանմամբ, որը զարգացվել է անգլիական դատարանների կողմից¹⁹: Կանոնի էությունը կայանում է նրանում, որ դատարանին իրավունք է տրվում անտեսել մեկնաբանվող իրավական ակտի տառացի իմաստը, եթե այն կարող է հանգեցնել ոչ խելամիտ հետևանքների: Փաստարկման լեզվաբանական տարբերակի կշիռը կարող է թուլանալ նաև այն դեպքում, երբ մեկնաբանվող իրավական ակտն այնքան հին է, որ կարող է կասկած հարուցել օգտագործված բառերի և արտահայտությունների տառացի իմաստի արդիականության վերաբերյալ: Նման իրավիճակ կարող է ստեղծվել նաև այն դեպքում, երբ մեկնաբանվող իրավական ակտում օգտագործվում են գնահատողական բառեր և եզրույթներ, ինչպիսիք են՝ «բարեխիղճ», «ողջամիտ» և այլն: Այստեղ նույնպես կարող են խնդիրներ առաջանալ նման բառերի տառացի մեկնաբանման դեպքում: Անգամ այն դեպքերում, երբ օգտագործված սովորական բառերը, արտահայտություններն ու մասնագիտական եզրույթները պարզ են և ոչ գնահատողական, կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ տառացի մեկնաբանությունն անհնարին լինի: Այդպիսի իրավիճակ կարող է առաջանալ, երբ մեկնաբանվող իրավական ակտերը նախագծված են բավականին ընդհանրական և համառոտ կերպով (սովորաբար՝ սահմանադրական ակտերի դեպքում): Մեկնաբանվող իրավական ակտի նախագծման աշխատանքներում նույնպես կարող են ակնհայտ թերություններ լինել, որոնք կարող են թուլացնել լեզվաբանական փաստարկների հարաբերական կշիռը²⁰: Այնուամենայնիվ, այս բացառություններից զատ, բառերի տառացի և մասնագիտական նշանակությու-

www.lawinstitute.am

նից բխող փաստարկները կարող են օգնել լուծելու իրավական մեկնաբանության խնդիրները: Բացի այդ դատարաններին միշտ էլ ավելի հեշտ է իրավական ակտերի մեկնաբանման ընթացքում հաստատել իրավաստեղծի կազմած տեքստի տառացի կամ մասնագիտական իմաստը, քան փորձել տալ իրավական ակտին այլ՝ վերջինիս տառացի կամ մասնագիտական իմաստից տարբերվող իմաստ:

Բնական է, որ զանազան դատական փաստարկման տեսակների մի մասն ավելի լայն տարածում է գտել որոշ իրավական համակարգերում, իսկ մեկ այլ մասը՝ այլ իրավական համակարգերում, այնուամենայնիվ, դատական փաստարկման հիմնական տեսակները կիրառվում են գրեթե բոլոր ժամանակակից իրավական համակարգերում: Հիմնականում բարձրագույն դատական ատյաններն իրավունքի մեկնաբանում իրականացնելիս օգտվում են մեկից ավել փաստարկներից, որպեսզի հիմնավորեն իրենց որոշումները: Այնուամենայնիվ, հաճախ բավարար է լինում նաև միայն մեկ տեսակի փաստարկի օգտագործումը: Պատճառն այն է, որ փաստարկման մեկից ավել տեսակների համադրությունները տարբեր դեպքերում կարող են հանգեցնել հակասական արդյունքների: Այսպիսով, իրավագիտության մեջ դեռևս չի գտնվել իրավաստեղծի մտադրության և իրավական ակտի տեքստի միջև առկա հակասության լուծման միանշանակ տարբերակ²¹:

Որոշ դեպքերում դատարաններն իրենց կողմից իրականացված իրավունքի մեկնաբանումը հիմնավորելու համար օգտագործում են միայն լեզվաբանական փաստարկները: Սա տեղի է ունենում այն դեպքերում, երբ մեկնաբանվող իրավական ակտի իմաստն առերևույթ (prima facie) բավականին պարզ և հասկանալի է թվում: Նման դեպքերում դատարանն ստիպված է լինում օգտագործել նաև փաստարկման այլ տեսակներ, եթե կողմերից մեկը

ցույց է տալիս, որ առերևույթ (prima facie) պարզ թվացող տեքստի իմաստը միանշանակ չէ և վիճարկելի է: Հակառակ դեպքում, դատավորները երբեմն բավարարվում են ընդամենն իրավական ակտի համապատասխան մասին հղում կատարելով՝ առանց փաստարկում պահանջող իրավական մեկնաբանումների²²: Դատական պրակտիկայում փաստարկման լեզվաբանական մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ լեզվաբանական փաստարկները հերքելը շատ ավելի բարդ է: Դատարանները միայն համապատասխան ցանկության դեպքում են շեղվում իրավական ակտերի տառացի իմաստից և մեկնաբանում դրանք այլ կերպ՝ կիրառելով փաստարկման մյուս տեսակները: Դատարանները հիմնականում խուսափում են ինստիտուցիոնալ բախումներից, երբ մեկնաբանում են օրենսդրական ակտերը, փորձելով չհակադրվել օրենսդրի լեզվաբանության ժողովրդավարական սկզբունքին: Սակայն սահմանադրությունները մեկնաբանելիս համապատասխան դատական ատյաններն առավել ազատ և անկաշկանդ են իրենց գործողություններում և առավել մեծ ցանկությամբ են կիրառում փաստարկման մնացած տեսակները:

Այնուամենայնիվ, իրավունքի մեկնաբանման ընթացքում բազմաթիվ են դեպքերը, երբ որոշ եզրակացության հանգեցում համար փաստարկման մեկից ավելի տեսակներ են անհրաժեշտ: Չնայած այս ամենին իրավական ակտերի դատական մեկնաբանման առաջնային և առավել շատ կիրառվող մոտեցումը համարվում է լեզվաբանական մոտեցումը, քանի որ դատարանները շարունակում են առավելապես հետևել իրավաստեղծի արտահայտած մտքերի լեզվաբանական իմաստին և առաջնահերթ փորձում են մեկնաբանել իրավական ակտերը նշված իմաստին համապատասխան:

¹ Տե՛ս Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն, 2-րդ հրատարակություն, Երևան, 1997, էջ 327; Коваров С.А. Общая теория государства и права. Учебник. 7-е издание. СПб. 2005. С. 350.

² Տե՛ս Лазарев В.В., Липень С.В. Теория государства и права. Учебник. Из. Спарк. Москва. 2005. С. 376; Поголика А.С. Теория государства и права. Учебник. Из. Городец. Москва. 2003. С. 402; Малько А.В. Теория государства и права. Учебник. Третье издание. Из. Кнорус. Москва. 2008. С. 216; Перевалов В.Д. Теория государства и права. Учебник. 3-е издание. Норма. М. 2004. С. 248.; Матузов Н.И. и Малько А.В. Теория государства и права. Курс лекций. 2-е издание. Юрист. 2002. С. 483.

³ Տե՛ս Марченко М.Н. Теория государства и права. Учебник. 2-е издание. Из. Проспект. Москва. 2007. С. 616; Сырых М.В. Теория государства и права. Учебник. 3-е издание. "Юридический Дом" Юстицинформ". Москва. 2004. С. 289; HansKelsen, Introduction to TheProblems of Legal Theory. OxfordUniversityPress, 2002, page 81.

⁴ Տե՛ս Сырых М.В. Теория государства и права. Учебник. 3-е издание. "Юридический Дом" Юстицинформ". Москва. 2004. С. 289.

⁵ Տե՛ս D.NeilMcCormic and Robert S. Summers. Interpretingstatutes: Acomparativestudy. Dartmouth PC 1991. P.464.

⁶ Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ 3- 1760(ՏԳ), 3-2027 (ՎԳ), 3-1831 (ՏԳ), 3-1640(ՎԳ), 3-1847(ՏԳ), 3-2134 (ՎԳ), 3-2048(ՎԳ), 3-2440 (ՎԳ), 2006թ., 3-951/ՏԳ, 3-27(ՏԳ), 3-690 (ՎԳ) 3-951 (ՏԳ), 3-1597 (ՎԳ), 3-1644 (ՎԳ), 3-1792 (ՏԳ) 2007թ., ԵԿԳ/3613/02/08, 2009թ., ՎԳ/4439/05/09, 2010թ.:

⁷ Տե՛ս Քաղաքացիական գործ թիվ 3-690 (ՎԳ) 2007թ.:

⁸ Տե՛ս Малько А.В. Теория государства и права. Учебник. Третье издание. Из. Кнорус. Москва. 2008. С. 217; Поголика А.С. Теория государства и права. Учебник. Из. Городец. Москва. 2003. С. 403; Лазарев В.В., Липень С.В. Теория государства и права. Учебник. Из. Спарк. Москва. 2005. С. 379.

⁹ Տե՛ս Сырых М.В. Теория государства и права. Учебник. 3-е издание. "Юридический Дом" Юстицинформ". Москва. 2004. С. 297.

¹⁰ Սակայն այն դեպքերում, երբ օգտագործվող բառը կամ արտահայտությունն ունի մի քանի իրավական նշանակություն, բառի ճիշտ իրավական նշանակությունը պարզելու համար անհրաժեշտ է համապատասխան իրավական ուսումնասիրություն: Այլ մասնագիտական բառերի և արտահայտությունների օգտագործման

դեպքում նույնպես բառի մեջ դրված իմաստն առաջին հայացքից կարող է պարզ չլինել, և կարող են պահանջվել լրացուցիչ ապացույցներ բառի կամ արտահայտության ներդրված իմաստը պարզելու համար: Օրինակ՝ բժշկական կամ այլ մասնագիտական եզրույթների օգտագործման պարագայում պետք է դիմել համապատասխան գրականության կամ մասնագետների օգնությանը:

¹¹ Տե՛ս Լազարև Բ.Վ., Լипень С.В. Теория государства и права. Учебник. Из. Спарк. Москва 2005. С. 376; Малько А.В. Теория государства и права. Учебник. Третье издание. Из. Кнорус. Москва. 2008. С. 216. Interpreting statutes: A comparative study. D. Neil MacCormic and Robert S. Summers. 1991. P.512.

¹² Տե՛ս Խրոխանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն, 2-րդ հրատարակություն, Երևան, 1997, էջ 327; Լազարև Բ.Վ., Լипень С.В. Теория государства и права. Учебник. Из. Спарк. Москва 2005. С. 376; Малько А.В. Теория государства и права. Учебник. Третье издание. Из. Кнорус. Москва. 2008. С. 216; Поголикина А.С. Теория государства и права. Учебник. Из. Городец. Москва. 2003. С. 402.

¹³ Տե՛ս Перевалов Բ.Д. Теория государства и права. Учебник. 3-е издание. Норма. М. 2004. С. 248.

¹⁴ Վերը նշվածից բխում է, որ որոշ դեպքերում դատարաններն իրավական ակտեր մեկնաբանելիս հենվում են մեկնաբանվող տեքստի շարահյուսության, ձևաբանության և խոսքի մասերի ուսումնասիրության արդյունքների վրա: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ բացի իրավունքի դատական մեկնաբանման լեզվաբանական մոտեցման դեպքում կիրառվող բառագիտական փաստարկների, կարող են կիրառվել նաև փաստարկման այլ տեսակներ, որոնք հիմնվում են շարահյուսության և խոսքի մասերին վերաբերող կանոնների վրա:

¹⁵ Տե՛ս Aleksander Peczenik, On LAW and Reason, Volume 8, Springer, 2008, page 312.

¹⁶ Տե՛ս Малько А.В. Теория Государства и Права. Учебник. третье издание, из. Кнорус, Москва, 2008. С. 216.

¹⁷ Տե՛ս Поголикина А.С. Теория Государства и Права. Учебник. из. Городец. Москва, 2003, С. 402.

¹⁸ Տե՛ս Thomas E.W. The Judicial Process. Realism, Pragmatism, Practical Reasoning and Principles. Cambridge University Press. 2005. Page 334.

¹⁹ Տե՛ս Becke v. Smith (1836) 2 M. & W. 191, Grey v. Pearson (1857) 6 HL Cas 61, 106.

²⁰ Տե՛ս Միաժամանակ, իրավունքի լեզվաբանական մոտեցման լայն կիրառելիությունը կարող է հանգեցնել նրան, որ իրավաստեղծ մարմիններն ավելի զգույշ լինեն իրավական ակտերի նախագծման և օգտագործվող բառերի ընտրման հարցերում: Պետք չէ մոռանալ նաև, որ իրավական ակտերի մեծ մասն ընդունվում է քաղաքական գործընթացների և համաձայնությունների արդյունքում, ինչը նույնպես կարող է բացասական ազդել ստեղծված իրավական ակտի իմաստի մատչելիության վրա:

²¹ Տե՛ս Hans Kelsen, Introduction to The Proplems of Legal Theory. Oxford University Press, 2002, page 81.

²² Սա փաստարկման այն ձևն է, երբ դատարանները գտնում են, որ փաստարկման մեկ տեսակի օգտագործումը բավարար է իրավական ակտի համապատասխան մեկնաբանությունը հիմնավորելու համար: Սակայն անհրաժեշտ է նշել, որ որոշ համակարգերում՝ ոչ միայն լեզվաբանական, այլ նաև դատական նախադեպերից բխող փաստարկներն էլ կարող են համարվել բավարար՝ իրավունքի դատական կոնկրետ մեկնաբանումը հիմնավորելու համար:

РЕЗЮМЕ

Особенности лингвистического подхода судебного толкования нормативных актов

Статья посвящена изучению одного из основных подходов судебного толкования нормативных актов - лингвистического подхода. В статье обсуждаются некоторые основные вопросы связанные с этим подходом. В статье описываются две основные судебные аргументы, которые применяются в пределах этого подхода. Это аргументы основанные на буквальном смысле слов и словосочетаний использованных в нормативном акте и аргументы основанные на специальном смысле обычных или специализированных слов. В статье также описывается взаимодействие между этими и другими аргументами. В заключении делается вывод что лингвистический подход является основным и самым распространенным подходом судебного толкования нормативных актов.

SUMMARY

The peculiarities of the linguistic approach of judicial interpretation of the legal acts

This article is devoted to the analysis of one of the main approaches or types of judicial interpretations of legal acts, which is the linguistic approach. This article discusses some central issues of this type of interpretation. It describes two main judicial arguments which are used in the framework of this approach, which are the arguments from the standard ordinary meaning (plain meaning) of ordinary words and expressions used in the legal act being interpreted and arguments from a standard technical meaning of ordinary words or of technical words (including legal terms). The article also describes the interaction between these arguments and other judicial arguments. In the end the author concludes that the linguistic approach is still the main and primary approach of judicial interpretation of legal acts.